

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**Կինոսցենարիստների գիլդիայի նախաձեռնող խմբի կողմից**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**Գիլդիաների նախագահների խորհրդի կողմից**

## **ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

### **Կինոսցենարիստների գիլդիայի**

#### **1 . Ընդհանուր դրույթներ**

1.1. Կինոսցենարիստների գիլդիան (այսուհետ Գիլդիա) Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, սույն Կանոնակարգի 1.2. կետով սահմանված կինոսցենարիստների միավորում է, որը ստեղծվել է կինոսցենարիստների նախաձեռնող խմբի կողմից (նախաձեռնող խմբի ժողովի որոշմամբ, որը հանդիսանում է սույն Կանոնակարգի բաղկացուցիչ մաս), կամավորության, շահերի ընդհանրության սկզբունքների հիման վրա և գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության հովանու ներքո՝ պաշտպանելու կինոդրամատուրգիայի ասպարեզում աշխատող մարդկանց մասնագիտական, իրավական, սոցիալական շահերը, նպաստելու ոլորտի զարգացմանը, հեղինակության բարձրացմանը, հանրայնացմանը:

1.2. Գիլդիան կինոսցենարիստ է դիտարկում այն անձանց, որոնք ունեն բարձրագույն կրթություն կինոսցենարիստի որակավորմամբ կամ զբաղվում են կինոսցենարիստական գործունեությամբ, ինչի ապացույց կարող են լինել այն խաղարկային, վավերագրական, անիմացիոն ֆիլմերը, հեռուստատեսային տեսաֆիլմերը, որոնք հեղինակված և ներկայացված են տվյալ անձի կողմից, և որոնց գեղարվեստական որակն ու մասնագիտական վարպետությունն ընդունվել է Գիլդիայի վարչության կողմից:

1.3. Գիլդիան իր ծրագրերն իրականացնում է ինքնուրույն:

1.4. Գիլդիան Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության հետ գործակցում է համագործակցության սկզբունքի հիման վրա, որը բխում է Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության կանոնադրական և Կինոսցենարիստների

գիլղիայի կանոնակարգային նպատակներից, կարգավորվում է Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության կանոնադրությամբ և սույն Կանոնակարգով:

## **2 . Գիլղիայի նպատակները և խնդիրները**

### **2.1. Գիլղիայի նպատակներն են.**

2.1.1. Կինոսցենարիստների համախմբումը մասնագիտական, իրավական, սոցիալական շահերի ընդհանրության շուրջ:

2.1.2. Կինոսցենարիստի մասնագիտության արժևորումը, հեղինակության բարձրացումը, զարգացումը և հանրայնացումը:

2.1.3. Կինոսցենարիստի մասնագիտական դերի կարևորումը կինոարտադրությունում՝ որպես կինոստեղծման կարևորագույն բաղկացուցիչ:

2.1.4. Գիլղիայի անդամ կինոսցենարիստների պրոֆեսիոնալ-ստեղծագործական աշխատանքի նվազագույն պայմանների ստեղծմանն ուղղված ծրագրերի աջակցությունը:

2.1.5. Գիլղիայի անդամ կինոսցենարիստների պրոֆեսիոնալ-մասնագիտական, սոցիալական, իրավական, նյութական, հեղինակային և հարակից իրավունքների և շահերի պաշտպանությունը:

2.1.6. Գիլղիայի անդամ կինոսցենարիստների մասնագիտական համագործակցության հնարավորությունների ստեղծումը հայաստանյան և օտարերկրյա կինոսցենարիստական համայնքների, կինոարտադրության ոլորտի մասնագիտական համքարությունների, կինոկազմակերպությունների, ոչ գիլղիայի անդամ կինոսցենարիստների և կինոմասնագիտությունների այլ կրողների հետ:

### **2.2. Գիլղիայի խնդիրներն են.**

2.2.1. Գիլղիայի անդամ կինոսցենարիստների գործունեության չափորոշիչների մշակումը և ընդունումը:

2.2.2. Գիլղիայի անդամ կինոսցենարիստների կորպորատիվ շահերի պաշտպանությունը:

2.2.3. Գիլղիայի անդամ կինոսցենարիստների մասնագիտական տեղեկացվածության բարձրացմանը նպաստելը:

2.2.4. Գիլդիայի անդամ կինոսցենարիստների մասնագիտական հմտությունների զարգացմանը նպաստելը:

2.2.5. Գիլդիայի անդամ կինոսցենարիստի գործունեության պրոֆեսիոնալ պայմանագրերի, պահանջվող այլ պրոֆեսիոնալ փաստաթղթերի մշակումն ու ընդունումը, ընդունված փաստաթղթերի կատարման ընթացքի վերահսկողությունը:

2.2.6. Գիլդիայի անդամ կինոսցենարիստի հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության ուղղությամբ համապատասխան կազմակերպությունների հետ աշխատանքների իրականացումը, իրավապայմանագրային փաստաթղթերի մշակումն ու ընդունումը, իրավապայմանագրային ընթացիկ գործունեությանն աջակցումը:

2.2.7. Մասնագիտական միջոցառումների՝ կինոփառատոների, մրցանակաբաշխությունների, համաժողովների, աշխատարանների, սեմինարների, այլ միջոցառումների կազմակերպումը հայաստանյան և միջազգային միջազգային կինոկարույցների՝ նրանց անդամների մասնակցությամբ:

2.2.8. Հայաստանյան և օտարերկրյա կինոսցենարիստների հետ հանդիպումների, վարպետաց դասերի կազմակերպումը և անցկացումը:

2.2.9. Երիտասարդ և ուսանող կինոսցենարիստների մասնագիտական և պրոֆեսիոնալ հմտությունների զարգացմանը նպաստող միջոցառումների կազմակերպումը և անցկացումը, գիլդիայի անդամ կինոսցենարիստների ընդգրկվածության ապահովումը երիտասարդ և ուսանող կինոսցենարիստների ստեղծագործական գործունեությանը:

2.2.10. Գիլդիայի անդամ վաստակաշատ կինոսցենարիստների, գիլդիայի պատվավոր անդամների նյութական, բարոյական կարիքների հոգածությանն աջակցելը:

2.2.11. Գիլդիայի անդամ կինոսցենարիստների պաշտպանությանն աջակցելը մասնագիտական խնդիրներով դատական գործընթացների ժամանակ:

2.2.12. Գիլդիայի անդամ կինոսցենարիստների միջև ֆիլմարտադրության շրջանում առաջացած բախումների հարթումն ու խնդիրների լուծումը:

2.2.13. Մեդիայի միջոցով գիլդիայի, գիլդիայի անդամ կինոսցենարիստների մասնագիտական նվաճումների, ձեռքբերումներին հանրության տեղեկացվածության ապահովումը:

2.2.14. Գիլդիայի անդամ կինոսցենարիստների մասնագիտական գործուղումների, միջազգային համաժողովների, աշխատարանների, փառատոների, կրթական, պրոֆեսիոնալ-մասնագիտական այլ միջոցառումների մասնակցությանն աջակցելը:

2.2.15. Գիլդիայի անդամ կինոսցենարիստների ներկայացումը պետական պարգևների, մրցանակաբաշխությունների և այլն:

2.2.16. Գիլդիայի անդամների և պատվիրատուների փոխգործակցության կազմակերպումը, գործարար և ստեղծագործական միջավայրի ստեղծումը:

2.2.17. Գիլդիայի անդամների միջև բարեխիղճ մրցակցության համար պայմանների ստեղծումը:

2.2.18. Գիլդիայի անդամների կայուն ֆինանսական իրավիճակի պայմանների ստեղծման աջակցությունը:

2.2.19. Նոր անդամների անդամակցությունը:

### **3. Գիլդիան կարող է.**

3.1. Հանդես գալ պրոֆեսիոնալ-մասնագիտական նախաձեռնություններով:

3.2. Իրականացնել ոլորտի մասնագիտական-փորձագիտական վերլուծություններ, կազմել զեկույցներ, հրապարակել կարծիքներ, տալ գնահատականներ:

3.3. Իր մասին տարածել տեղեկատվություն:

3.4. Իր սահմանած կարգով, որը կհանդիսանա սույն Կանոնակարգի բաղկացուցիչ մաս, տնօրինել իր դրամական միջոցները:

3.5. Փոփոխել կառուցվածքը:

3.6. Գովազդել իր գործունեությունը:

3.7. Հիմնել մասնագիտական մրցանակ, անցկացնել մրցանակաբաշխություններ, հանձնել մրցանակներ, պարգևներ:

3.8. Ունենալ պաշտոնական ձևաթուղթ և խորհրդանշան (լոգո):

3.9. Գիլդիայի անդամների ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրամադրել ժամանակավոր նյութական օգնություն:

#### **4. Գիլդիան պարտավոր է**

4.1. Ղեկավարվել ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոնակարգով, մասնագիտական Վարքականոնով, եթե այդպիսին ընդունված է:

4.2. Իրականացնել իր անդամների հաշվառում:

4.3. Անվճար օգնել գործատուներին՝ գտնելու համապատասխան մասնագետներ Գիլդիայից, օգտվել Գիլդիայի տվյալների բազայից:

#### **5. Անդամակցությունը Գիլդիային, անդամների իրավունքները և պարտականությունները.**

##### **5.1. Անդամակցությունը Գիլդիային.**

5.1.1. Գիլդիայի անդամ կարող են դառնալ ՀՀ քաղաքացիություն ունեցող պրոֆեսիոնալ կինոսցենարիստները, անկախ նրանց Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության անդամ լինելու հանգամանքից:

5.1.2. Բացառության կարգով Գիլդիայի անդամ կարող են դառնալ սույն Կանոնակարգի 1.2. կետի սահմանումին համապատասխանող կինոսցենարիստները:

5.1.3. Անդամակցությունը Գիլդիային իրականացվում է անհատական կարգով, սեփական դիմումի և սույն Կանոնակարգի 5.4. կետում սահմանված փաստաթղթերի հիման վրա:

5.1.4. Գիլդիային անդամակցության համար ներկայացվում է.

-Սահմանված կարգի գրավոր դիմում:

-Ինքնակենսագրություն (CV):

-Դիպլոմի պատճեն:

-Սահմանված կարգի ստեղծագործական թերթիկ:

- Խաղարկային, վավերագրական, անիմացիոն ֆիլմերի, հեռուստատեսային տեսաֆիլմերի պատճեններ որևէ կրիչով, կամ տեսահոսթինգային հարթակների համապատասխան հղումներ (պահանջի դեպքում):

5.1.5. Գիլդիայի անդամակցության հարցը որոշում է Գիլդիայի վարչությունը:

5.1.6. Գիլդիայի անդամակցության համար սահմանվում է մուտքավճար երկու հազար ՀՀ դրամի չափով:

5.1.7. Մուտքավճարի մուծումն իրականացվում է անդամակցության մասին Գիլդիայի վարչության որոշման ընդունումից հետո:

5.1.8. Գիլդիան կարող է ունենալ պատվավոր անդամներ, որոնց որոշում է Գիլդիայի վարչությունը:

5.1.9. Գիլդիայի անդամը կարող է անարգել դուրս գալ Գիլդիայից:

5.1.10. Գիլդիայի անդամներին տրվում է վկայական՝ հաստատված վարչության կողմից:

5.1.11. Սույն Կանոնակարգի, մասնագիտական էթիկայի խախտման դեպքում Գիլդիայի անդամը կարող է հեռացվել Գիլդիայից վարչության որոշմամբ:

## **5.2. Գիլդիայի անդամներն իրավունք ունեն.**

5.2.1. Ընտրել և ընտրվել Գիլդիայի կառավարման մարմիններում:

5.2.2. Իրենց մասնագիտական, հեղինակային և հարակից շահերի ունահարման դեպքում օգտվել Գիլդիայի իրավական աջակցությունից:

5.2.3. Ստանալ լիարժեք տեղեկատվության Գիլդիայի գործունեության մասին:

5.2.4. Ներկայացնել առաջարկություններ Գիլդիայի աշխատանքների բարելավման ուղղությամբ:

5.2.5. Մասնակցել Գիլդիայի կազմակերպած բոլոր միջոցառումներին:

## **5.3. Գիլդիայի անդամը պարտավոր է.**

5.3.1. Մուծել մուտքավճար և անդամավճար:

5.3.2. Պահպանել կանոնակարգային դրույթները:

5.3.3. Իրականացնել Գիլդիայի կառավարման մարմինների որոշումները:

5.3.4. Ակտիվորեն մասնակցել Գիլդիայի գործունեությանը:

5.3.5. Կինոարտադրող ընկերությունների, այլ կազմակերպությունների հետ մասնագիտական գործունեության աշխատանքային պայմանագրերի, համաձայնագրերի կնքման ժամանակ հաշվի առնել կինոսցենարիստի վարձատրման նվազագույն չափի մասին Գիլդիայի Հանձնարարականը, որը սահմանվում է Գիլդիայի կողմից և որը հանդիսանում է սույն Կանոնակարգի բաղկացուցիչ մաս:

5.3.6. Պահպանել Գիլդիայի անդամի մասնագիտական վարքականոնը:

5.3.7. Մասնագիտական վիճելի հարցերը գիլդիայի և այլ պրոֆեսիոնալ գիլդիաների անդամների միջև լուծել գիլդիայի և այլ պրոֆեսիոնալ գիլդիաների, գիլդիաների նախագահների խորհրդի, գիլդիաների նախագահների խորհրդի կողմից ստեղծված այլ էթիկական, վարքականոնային մարմինների միջոցով:

5.3.8. Տարեկան վեց ժամ իրականացնել անվճար մասնագիտական գործունեություն երիտասարդ կինոսցենարիստների, ուսանող կինոսցենարիստների դեբյուտային և ուսանողական աշխատանքներում:

## **6 . Գիլդիայի կառավարման մարմինները.**

6.1. Գիլդիայի կառավարման մարմիններն են Գիլդիայի համաժողովը, Գիլդիայի վարչությունը, Գիլդիայի գործադիր մարմինը՝ նախագահը:

6.2. Գիլդիայի կառավարման բարձրագույն մարմինը Համաժողովն է, որն ընտրում է Գիլդիայի նախագահին, 5 (հինգ) անձից բաղկացած վարչություն և որն ունի Գիլդիայի գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք:

6.3. Գիլդիայի Համաժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

6.4. Հերթական Համաժողովը հրավիրվում է ոչ պակաս, քան յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ Գիլդիայի վարչության կողմից:

6.5. Արտահերթ Համաժողով կարող է հրավիրվել Գիլդիայի անդամների 1/3-ի պահանջով:

6.6. Համաժողովն օրինական է, եթե դրան մասնակցում է Գիլդիայի անդամների կեսից ավելին:

6.7. Համաժողովում հարցերի ընդգրկման, ընտրություններում թեկնածուների առաջադրման, քվեարկությունների կարգը որոշվում է վարչության կողմից:

## **7. Վարչությունը**

7.1. Մշակում է Գիլդիայի գործունեության հիմնական ուղղությունները, ընթացիկ և հեռանկարային ծրագրերը:

7.2. Նախապատրաստում է Գիլդիայի Համաժողովը:

7.3. Իրականացնում է Գիլդիայի Համաժողովի որոշումները:

7.4. Հաստատում է կարգեր և այլ փաստաթղթեր:

7.5. Մշակում է Գիլդիայի միջոցների ներգրավման նախագծեր:

7.6. Լուծում է անդամակցության և անդամությունից հեռացման հարցերը:

7.7. Լուծում է անդամավճարների, մուտքի վճարների հարցերը:

7.8. Գիլդիայի անդամ կինոսցենարիստներին ներկայացնում է պետական պարգևների, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության անդամակցության:

7.9. Գիլդիայի անդամ կինոսցենարիստների ֆիլմերը ներկայացնում է մրցանակների, մրցանակաբաշխությունների, փառատոների և այլ միջոցառումների:

7.10. Հաստատում է Գիլդիայի կառուցվածքը:

## **8. Նախագահը**

8.1. Նախագահը ընտրվում է Գիլդիայի Համաժողովի կողմից՝ մեկ տարի ժամկետով: Գիլդիայի գործադիր մարմինը Գիլդիայի նախագահն է: Նախագահը ղեկավարում է Գիլդիայի ընթացիկ գործունեությունը, վարում է վարչության նիստերը:

8.2. Ներկայացնում է Գիլդիան Հայաստանի և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում, գիլդիաների նախագահների խորհրդում:

8.3. Ղեկավարում է վարչության նիստերը, կատարում է գործառույթների բաժանում վարչության անդամների միջև:

8.4. Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության հետ համագործակցաբար իրականացնում է Գիլդիայի ֆինանսական գործունեությունը:



8.5. Նշանակում և ազատում է կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, սահմանում է նրանց պարտականությունները:

8.6. Կնքում է պայմանագրեր, համաձայնագրեր:

8.7. Հաշվետվություն է ներկայացնում Համաժողովին:

## **9 . Ֆինանսական միջոցները**

9.1 Գիլդիայի ֆինանսական միջոցները գոյանում են.

9.1.1. Մուտքի և անդամակցության անդամավճարներից:

9.1.2. Գիլդիայի անդամի՝ կինոարտադրող ընկերությունների, այլ կազմակերպությունների հետ մասնագիտական գործունեության աշխատանքային պայմանագրերով, համաձայնագրերով նախատեսված եկամուտների մասհանումներից, որը սահմանվում է առանձին Հանձնարարականով, որը հանդիսանում է սույն Կանոնակարգի բաղկացուցիչ մաս:

9.1.3. Կամավոր մուծումներից, նվիրատվություններից, դրամահավաքներից, բարեգործական ակցիաներից:

9.1.4. Գիլդիայի կողմից անցկացվող միջոցառումներից:

9.1.5. Գիլդիան և Գիլդիայի անդամները իրավունք չունեն ստանալ նյութական օգնություն, աջակցություն օտարերկրյա պետություններից (չհաշված մասնագիտական դրամաշնորհները, մասնագիտական հիմնադրամներից ստացված ֆիլմարտադրության համար նախատեսված միջոցները), քաղաքական կազմակերպություններից, կուսակցություններից:

9.1.5. Գիլդիայի գործունեությունը կարող է ստուգվել Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության վերստուգիչ հանձնաժողովի կողմից առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև Գիլդիայի Համաժողովի, Գիլդիայի անդամների 1/3-ի, Գիլդիայի վարչության պահանջով, Գիլդիայի նախագահի որոշմամբ: